Օրինակ №__________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 460-Լ

"05" 05 2020թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ ՏԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ (ՊԵՏԵՐԻ) ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2008Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N871 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2018Թ. ՄԱՅԻՍԻ 8-Ի 424 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 13-րդ մասով և 48-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդներ տալու գործընթացը կանոնակարգելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդներ տալու կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդներ տալու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սահմանել, որ՝

1) զինծառայողներին արձակուրդների տրման գործընթացի պատշաճ կատարման (վերահսկման) համար պատասխանատու է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարը (պետը),

2) զինծառայողներին սույն հրամանով հաստատված արձակուրդ տալու կարգի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, շաբաթական ծառայության ժամանակի համար սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված օրերի դիմաց զինծառայողների կողմից դրամական փոխհատուցման պահանջ կամ դատական հայցեր ներկայացվելու դեպքում իրավասու հրամանատարների (պետերի) նկատմամբ կկիրառվեն օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք:

3. ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության պետին՝

ապահովել սույն հրամանի հրապարակումը ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում:

4. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2009 թվականի օգոստոսի 12-ի «ՀՀ զինված ուժերի զինծառայողներին հերթական (հիմնական) և լրացուցիչ արձակուրդ տալու կարգը հաստատելու և զորամասի տեղաբաշխման վայրից արձակելու գործընթացը հստակեցնելու մասին» N871 հրամանը,

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2018 թվականի մայիսի 8-ի «Զինծառայողների ուղեգրման, բուժման, բուժման ժամկետների, հիվանդության պատճառով վերականգնողական արձակուրդ տրամադրելու մասին կարգերը հաստատելու և ՀՀ պաշտպանության նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N424 հրամանի 3-րդ հավելվածը:

5. Հրամանի կատարումը վերահսկում է ՀՀ պաշտպանության նախարարը:

6. Հրամանը հասցնել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, պաշտպանության նախարարի և զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալներին, ՊՆ գլխավոր քարտուղարին, ՊՆ և ԶՈւ գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, զորամիավորումների, միավորումների, զորամասերի հրամանատարներին՝ ըստ առաքման հաշվարկի:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ **Դ. ՏՈՆՈՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ պաշտպանության նախարարի
2020թ.______05______«___05___»-ի
N___460-Ա___հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ ՏԱԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) սահմանվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդներ տրամադրելու կարգը և պայմանները:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդների տրամադրումն իրականացվում է իրավասու հրամանատարի (պետի) գրավոր հրամանով (ձև 1 և դրա տարբերակներ)՝ օրացուցային տարվա համար սահմանված արձակուրդների տրման ժամանակացույցի համաձայն (ձև 2, 3):

3. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելու դեպքում լրացվում է նաև արձակուրդային թերթիկ (ձև 4, 5): Ընդ որում, զինծառայողին տրվում է արձակուրդային թերթիկի ձախակողմյան հատվածը, որի դարձերեսին կատարվում է համապատասխան գրառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. օգոստոսի 9-ի N898-Ն որոշման 9-րդ կետով սահմանված կարգով, իսկ աջակողմյանը՝ կցվում է արձակուրդի տրման մասին հրամանին:

4. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում զինծառայողի ցանկությամբ արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու համար զինծառայողին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում տրվում է ֆինանսական ծառայության (ստորաբաժանման) միջոցով՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա.

1) լրացուցիչ արձակուրդներ տրամադրելու բոլոր դեպքերում՝ անկախ տարվա ընթացքում դրանց քանակից,

2) մյուս բոլոր տեսակի արձակուրդների (հիմնական, հերթական, հիվանդության պատճառով (վերականգնողական), ուսումնական, իսկ կին զինծառայողի պարագայում՝ նաև հղիության և ծննդաբերության) դեպքում՝ միայն առաջին արձակուրդի համար՝ անկախ հետագայում նույն կամ այլ տեսակի (բացառությամբ՝ լրացուցիչ արձակուրդի) արձակուրդներից օգտվելու հանգամանքից, որոնց դեպքում փոխհատուցում չի տրամադրվում,

3) արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալու համար զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. օգոստոսի 9-ի N898-Ն որոշմամբ սահմանված կարգով և չափերով՝ հեռավորության հետևյալ հաշվարկով.

ա. հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդի դեպքում՝ զինծառայողի՝ ստացիոնար բուժման մեջ գտնվելու բժշկական հաստատությունից,

բ. մյուս բոլոր դեպքերում՝ զորամասի մշտական տեղակայման վայրից, իսկ ուսումնառություն անցնելու (գործուղված լինելու) դեպքում՝ տվյալ ուսումնական հաստատության տեղակայման վայրից:

5. Տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը կատարվում է նաև կանխավճարային ձևով, եթե այդ մասին նշված է զինծառայողի զեկուցագրում (բացառությամբ ժամկետային պարտադիր կրտսեր ենթասպայական և շարքային կազմի զինծառայողների): Այն դեպքում, երբ արձակուրդից վերադառնալիս զինծառայողի կողմից չեն ներկայացվում զեկուցագրում նշված արձակուրդի անցկացման վայրում գտնվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. օգոստոսի 9-ի N898-Ն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված հիմնավորող փաստաթղթերը, վերջինիս՝ արձակուրդին հաջորդող ամսվա դրամական ապահովման գումարից տրանսպորտային ծախսերի փոխհատուցում իրականացրած ստորաբաժանման կողմից սահմանված կարգով կատարվում է պահում՝ տրված կանխավճարի գումարի չափով, իսկ կանխավճարային ձևով ստացված գումարից փաստացի ավելի քիչ ծախսելու դեպքում գումարի վերադարձն իրականացվում է Ֆինանսական ծառայության կողմից տրամադրված գանձապետական հաշվին վճարում կատարելու միջոցով:

6. Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած պայմանագրային զինծառայողի, իսկ հիմնական կամ լրացուցիչ արձակուրդի ընթացքում ժամկետային պարտադիր զինծառայողի հիվանդության ժամանակահատվածը չի հաշվարկվում տրված արձակուրդի ժամկետում: Արձակուրդը զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) գրավոր հրամանով հիվանդության օրերի թվով երկարաձգվում է՝ հիմք ընդունելով բուժումն իրականացրած բժշկական հաստատության համապատասխան տեղեկանքը:

7. Զինծառայողներին հիմնական, հերթական, լրացուցիչ, իսկ ժամկետային պարտադիր զինծառայողներին նաև հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տալու դեպքում (բացառությամբ ամսական) տրվում է նաև արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև 2 օրացուցային օր ընդհանուր ժամկետով, որի վերաբերյալ նշում է կատարվում արձակուրդային թերթիկում.

1) 100-ից 200 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1 օր տևողությամբ,

2) 200 ավելի կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2 օր տևողությամբ:

8. Արձակուրդ մեկնող և արձակուրդից զորամաս վերադարձող զինծառայողները համապատասխան կադրային ստորաբաժանման կողմից հաշվառվում են «Ժամանակավորապես բացակայող և ժամանակավորապես զորամաս եկող անձնակազմի հաշվառման մատյանում»՝ հիմք ընդունելով զորամասի հրամանատարի (զինվորական կառավարման մարմնի պետի) համապատասխան հրամանը:

9. Զինծառայողի՝ արձակուրդից վերադառնալու և ծառայողական պարտականությունների կատարմանն անցնելու վերաբերյալ արձակվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) հրաման:

2. ԿՐՏՍԵՐ ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ, ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ

10. Կրտսեր ենթասպայական, շարքային կազմի ժամկետային պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

1) հիմնական,

2) լրացուցիչ,

3) հիվանդության պատճառով (վերականգնողական),

4) ամսական:

11. Սպայական կազմի ժամկետային պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

1) հերթական,

2) լրացուցիչ,

3) հիվանդության պատճառով (վերականգնողական):

12. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին հիմնական արձակուրդ տրվում է ծառայության ընթացքում մեկ անգամ՝ ոչ պակաս, քան հինգ ամսվա օրացուցային ծառայության դեպքում, զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից: Արձակուրդի տրման հերթականությունը (առաջնահերթությունը) որոշվում է՝ հաշվի առնելով զորամասի (զինվորական կառավարման մարմնի) մարտական պատրաստության ապահովման շահերը և զինծառայողի բարեխիղճ ծառայությունը (բարձր կարգապահությունը, կարգապահական տույժ չունենալը, հասարակական ակտիվությունը)՝ զորակոչման ժամկետի սկզբունքով և մարտական պատրաստականության վիճակից ելնելով (այն հաշվարկով, որպեսզի միաժամանակ արձակուրդում գտնվող անձնակազմի թիվը չգերազանցի զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի թվաքանակի մինչև 5%-ը):

13. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների արձակուրդների տրման ժամանակացույցը կարող է փոփոխության ենթարկվել միայն «հիմնական արձակուրդի տրման հետաձգում» կամ «կարգապահական վաշտ ուղարկելը» կարգապահական տույժերը կիրառելու դեպքում կամ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով կամ զինծառայողի հիմնավորված զեկուցագրի հիման վրա:

14. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելու նպատակով զորամասի (զինվորական կառավարման մարմնի) ստորաբաժանումների (ծառայությունների) հրամանատարները (պետերը) զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին) են ներկայացնում ենթակա պարտադիր զին-

ծառայողների տվյալները, արձակուրդ տալու հերթականության որոշման հիմնավորումը և ժամկետը:

15. Հիմնական արձակուրդ տրվում է՝

1) շարքային կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 10 օրացուցային օր,

2) կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 15 օրացուցային օր:

16. Սպայական կազմի ժամկետային պարտադիր զինծառայողներին յուրաքանչյուր տարվա հերթական արձակուրդը տրվում է՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով: Տվյալ դեպքում հերթական արձակուրդի տրման ժամկետը ներառվում է պայմանագրային զինծառայողներին արձակուրդի տրման ժամանակացույցում:

17. Կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի ժամկետային պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է 5 օրացուցային օր տևողությամբ.

1) զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար (ուսումնական փուլի, մարտական հերթապահության ամփոփման եռամսյա արդյունքներով, հատուկ առաջադրանքի կատարման համար)՝ խրախուսման կարգով,

2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ երեխա ծնվելու կամ զինծառայողի ամուսնության կամ նրա ընտանիքի անդամի (կին, ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում:

Սույն կետով նախատեսված լրացուցիչ արձակուրդը տրվում է յուրաքանչյուր դեպքում՝ հիմքերը ծագելու օրվանից: Նշված դեպքերը հավաստվում են զինծառայողի զորակոչի վայրի զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից ուղարկված հեռախոսագրով կամ զորամաս առձեռն ներկայացված համապատասխան փաստաթղթերով:

Սույն ենթակետով արձակուրդի տրման համար որպես ընտանեկան հանգամանքները հաստատող փաստաթղթեր են ընդունվում.

ա. ամուսնության դեպքում՝ ՀՀ ՔԿԱԳ մարմնի կողմից տրված ամուսնության վկայականի պատճենը (տեղեկանքը), կամ համայնքի ղեկավարի, կամ հարսանյաց արա-

րողության ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը,

բ. երեխայի ծնվելու դեպքում՝ ՀՀ ՔԿԱԳ մարմնի կողմից տրված երեխայի ծննդյան վկայականի պատճենը,

գ. մահվան դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված մահվան վկայականը կամ համայնքի (հիմնականում մարզկենտրոններից հեռավոր վայրերում) ղեկավարի կողմից տրված տեղեկանքը,

3) ներքոնշյալ պայմաններ ունենալու դեպքում՝ 6 ամիսը մեկ անգամ.

ա. եթե ամուսնացած է և ունի մեկ երեխա,

բ. եթե 63 տարին լրացած կամ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (եթե սահմանված չէ ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում) ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակն է,

գ. եթե ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր),

դ. եթե ծնողները մահացած են,

ե. եթե ծնողներից մեկը մահացած է և այդ զինծառայողն ընտանիքի միակ զավակն է, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են և ունեն հաշմանդամություն, կամ դատարանի վճռով ճանաչվել են անգործունակ:

18. Սպայական կազմի ժամկետային պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է ընտանեկան պայմաններից ելնելով՝ երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ծանր հիվանդության, ամուսնության կամ մահվան դեպքերում՝ 5 օրացուցային օր տևողությամբ՝ սույն կարգի 17-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերի հիման վրա:

19. Հիմնական կամ հերթական կամ լրացուցիչ կամ ամսական արձակուրդի ընթացքում կրտսեր ենթասպայական, շարքային կամ սպայական կազմերի ժամկետային պարտադիր զինծառայողի հիվանդության դեպքում զինծառայողը կամ նրա ընտանիքի անդամներից մեկը պարտավոր է արձակուրդի ժամկետի ավարտի վերջին օրվա ընթացքում հիվանդության պատճառով արձակուրդից ժամանակին չվերադառնալու մասին հայտնել արձակուրդի վայրի զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում: Ստուգելով ներկայացված տեղեկատվության իսկությունը, զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է ոչ ուշ, քան արձակուրդի ժամկետի ավարտին հաջորդող օրվա ընթացքում այդ մասին հեռագիր (հեռախոսագիր կամ էլեկտրոնային փոստի միջոցով) ուղարկել զինծառայողի զորամաս, անհրաժեշտության դեպքում՝ հայտնելով նաև ՌՈ կայազորային բաժին (բաժանմունք):

20. Զինծառայողներն արձակուրդ մեկնելուց առաջ անմիջական հրամանատարի (պետի) կողմից հրահանգավորվում են արձակուրդի ընթացքում զինծառայողի մոտ պարտադիր պահվող փաստաթղթերի (սպայի անձնական վկայական, զինվորական գրքույկ, արձակուրդային թերթիկ), զինվորական բարեկրթության նորմերը պահպանելու, սահմանված ժամկետում ծառայության վերադառնալու, իսկ կրտսեր ենթասպայական, շարքային կազմերի ժամկետային պարտադիր զինծառայողները՝ արձակուրդի անցկացման վայրի զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումում կամ համայնքապետարանում (համատիրությունում) ժամանման ու արձակուրդից վերադառնալիս մեկնման մասին արձակուրդային թերթիկում գրառում կատարելու համար զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային համապատասխան ստորաբաժանում ներկայանալու պարտականության վերաբերյալ: Հրահանգավորում անցկացնելու մասին զինծառայողի արձակուրդային թերթիկում կատարվում է համապատասխան գրառում:

21. Զինծառայողներն արձակուրդ մեկնելուց առաջ և արձակուրդից վերադառնալուց հետո զորամասի (զինվորական կառավարման մարմնի) բուժկետում ենթարկվում են բուժզննման, որի արդյունքները գրառվում են անձնակազմի բուժզննման հաշվառման մատյանում:

22. Ամսական արձակուրդ տրվում է շարքային կազմի այն ժամկետային պարտադիր զինծառայողներին, ովքեր ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքել են «ՀՀ

պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու մասին» պայմանագիր՝ ծառայության 6 ամիսը լրանալուց հետո յուրաքանչյուր ամսվա ընթացքում 7 օրացուցային օր ժամկետով, որը ներառում է նաև արձակուրդի վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու ժամանակահատվածը: Սույն կետում նշված շարքային կազմի ժամկետային պարտադիր զինծառայողներին հիմնական արձակուրդը տրվում է մինչև նշված պայմանագրի ուժի մեջ մտնելը, իսկ լրացուցիչ արձակուրդ տրվում է միայն սույն կարգի 17-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքերում: Ամսական արձակուրդից հրաժարվելու կամ հասանելիք օրերից պակաս ժամկետով ամսական արձակուրդից օգտվելու դեպքում չօգտագործված ամսական արձակուրդի օրերը զինծառայողին լրացուցիչ չեն տրվում:

23. Կրտսեր ենթասպայական, շարքային կազմերի ժամկետային պարտադիր զինծառայողներն արձակուրդից վերադառնալու մասին զեկուցում են զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հերթապահին և անմիջական հրամանատարին (պետին), իսկ սպայական կազմի զինծառայողները ներկայացնում են զեկուցագիր անմիջական հրամանատարին (պետին):

24. Հիմնական, լրացուցիչ, ամսական արձակուրդից օգտված կրտսեր ենթասպայական, շարքային կազմերի ժամկետային պարտադիր զինծառայողների հաշվառումն իրականացվում է արձակուրդների հաշմառման տեղեկագրի (ձև 6) համաձայն, որը սահմանված կարգով հաշվառվում է և պահվում զորամասի (զինվորական կառավարման մարմնի) շտաբում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ

25. Պայմանագրային զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

1) հերթական,

2) լրացուցիչ,

3) ուսումնական (ռազմաուսումնական հաստատությունում սովորելու ընթացքում),

4) հիվանդության պատճառով (վերականգնողական),

5) կին զինծառայողին՝ հղիության և ծննդաբերության համար:

Զինծառայողներն արձակուրդից վերադառնալու մասին ներկայացնում են զեկուցագիր անմիջական հրամանատարին (պետին):

27. Պայմանագրային զինծառայողների համար հերթական արձակուրդի տևողությունը սահմանվում է.

1) մինչև 15 օրացուցային տարի ծառայության դեպքում՝ տարվա ընթացքում 30 օրացուցային օր.

2) 15-25 օրացուցային տարի ծառայության դեպքում՝ տարվա ընթացքում 35 օրացուցային օր.

3) 25 և ավելի օրացուցային տարի ծառայության դեպքում՝ տարվա ընթացքում 40 օրացուցային օր:

28. Հերթական արձակուրդը պայմանագրային զինծառայողի ցանկությամբ (զեկուցագրի հիման վրա) կարող է տրվել մաս-մաս, սակայն ոչ ավելի, քան երկու մասով, ինչը հաշվի է առնվում արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս: Հերթական արձակուրդը մասերով տրամադրվելու դեպքում ամենամյա արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն 10 օրացուցային օր:

29. Պայմանագրային զինծառայողների արձակուրդների տրամադրումը կանոնակարգված իրականացնելու նպատակով իրավասու հրամանատարի (պետի) կողմից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը հաստատվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) պայմանագրային զինծառայողներին և ժամկետային պարտադիր զինվորական ծառայության սպաներին հաջորդ տարվա ընթացքում արձակուրդների տրման ժամանակացույց, որը կազմվում է սոցիալական արդարության պահպանմամբ՝ նկատառելով մարտական պատրաստության ապահովման, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները և արձակուրդի հավասարաչափ օգտագործման անհրաժեշտությունը, այն հաշվարկով, որպեսզի միաժամանակ արձակուրդում գտնվող անձնակազմի թվաքանակը չգերազանցի զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի թվաքանակի 30%-ը: Արձակուրդի տրման ժամանակացույցում ներառվում են նաև նախորդ տարվանից տեղափոխված արձակուրդների օրերը:

30. Պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների զինծառայողների արձակուրդների տրման ժամանակացույցը հաստատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթու-

թյան վարչության պետի կողմից, որից հետո քաղվածքները տրամադրվում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին:

31. Օրացուցային տարվա համար զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) հաստատած ժամանակացույցը ծանոթացվում է զինծառայողներին՝ անձնական ստորագրությամբ, իսկ պատճենը տրամադրվում համապատասխան ֆինանսական ստորաբաժանմանը՝ սահմանված կարգով և ժամկետներում արձակուրդ մեկնող զինծառայողների տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու (վճարելու) համար:

32. Օրացուցային տարվա ընթացքում արձակուրդների տրման ժամանակացույցը կարող է փոփոխության ենթարկվել միայն ծառայողական անհրաժեշտությունից ելնելով կամ զինծառայողի հիմնավորված զեկուցագրի հիման վրա, որը հրամանատարի (պետի) համապատասխան գրավոր որոշման դեպքում կցվում է ժամանակացույցին:

33. Արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս հերթական արձակուրդի ժամանակը որոշելու իրավունք է վերապահվում՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստացած զինծառայողներին,

2) մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա ունեցող զինծառայողներին,

3) հաշմանդամություն ունեցող ամուսին կամ երեխա ունեցող զինծառայողներին:

34. Պայմանագրային զինծառայող ամուսինների հերթական արձակուրդն իրենց ցանկությամբ կարող է տրվել միաժամանակ՝ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) որոշմամբ: Տարբեր զորամասերում ծառայող ամուսիններին արձակուրդի միաժամանակ հատկացումը կազմակերպվում է հրամանատարների (պետերի) գրավոր փոխհամաձայնությամբ:

35. Պայմանագրային զինծառայողը հերթական արձակուրդ մեկնելուց առնվազն 10 օրացուցային օր առաջ (բացառությամբ սույն Կարգի 80-րդ կետով նախատեսված դեպքի) ըստ վերադասության զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին) ներկայացնում է զեկուցագիր՝ նշելով արձակուդի ժամկետը, անցկացման վայրը, իրեն ուղեկցող ընտանիքի անդամներին:

36. Ներկայացված զեկուցագիրը սահմանված կարգով հաշվառվում է «Զորամասերում զինծառայողների ներկայացրած զեկուցագրերի հաշվառման մատյանում» կամ ըստ սահմանված ձևաչափի վարվում է էլեկտրոնային հաշվառում: Զեկուցագրի առնչությամբ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում կայացվում է համապատասխան որոշում:

37. Արձակուրդ տրամադրելու վերաբերյալ զեկուցագրի հիման վրա զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) որոշման համաձայն նախապատրաստվում է հրամանի նախագիծ, լրացվում արձակուրդային թերթիկ և արձակուրդը սկսվելու օրվանից առաջ հնգօրյա ժամկետում ներկայացվում ստորագրման:

Սույն հրամանի 2-րդ հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված զինծառայողների արձակուրդային թերթիկը լրացվում և տրվում է ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության, իսկ 2-րդ ենթակետում նշված զինծառայողների արձակուրդային թերթիկ՝ ՀՀ ԶՈւ վարչակազմակերպչական վարչությունների պետերի կողմից:

38. Ստորագրվելուց հետո հրամանը կոդավորվում է և հրապարակումից հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում ստորագրությամբ ծանոթացվում զինծառայողին, վերջինիս պահանջի դեպքում նրան տրամադրվում է դրա պատճենը, որի վերաբերյալ կատարվում է նշում և սահմանված կարգով հաշվառվում: Այն զորամասերում, որտեղ վարվում է զորամասի հրամանատարի հրամանների հրամանագիրք, արձակուրդի հրամանի վերաբերյալ նույնաբովանդակ գրառում է արվում նաև հրամանագրքում:

39. Հաստատված ժամանակացույցի համաձայն արձակուրդ տալու վերաբերյալ սույն կարգի 35-րդ կետով նախատեսված կարգով զեկուցագիր չներկայացնելու դեպքում, բացառությամբ հիվանդության հետևանքով ծառայողական պարտականությունների կատարումից ազատված լինելու դեպքի, վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումում նախապատրաստվում է արձակուրդ տալու իրավասու հրամանատարի (պետի) հրամանի նախագիծ ու ներկայացվում ստորագրման, ինչի վերաբերյալ առնվազն ստորագրմանը հաջորդող օրը տեղեկացվում է տվյալ զինծառայողին:

40. Զինծառայողը պարտավոր է արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալուց հետո ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. օգոստոսի 9-ի N898-Ն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված հիմնավորող փաստաթղթերը՝ համապատասխան նշումներով: Նշված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է, եթե զինծառայողին արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար լրացուցիչ օրեր տալու հիմքերը բացակայում են կամ զինծառայողը չի ներկայացրել արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու ծախսերը փոխհատուցելու վերաբերյալ զեկուցագիր:

41. Արձակուրդի անցկացման վայր մեկնելու փաստը չհաստատվելու դեպքում ճանապարհի համար տրամադրված օրերը համարվում են անհարգելի պատճառով ծառայության չներկայացած օրեր: Այս դեպքում զինծառայողին դրամական ապահովություն չի հաշվարկվում:

42. Օրացուցային տարվա ընթացքում հերթական արձակուրդից չօգտված և կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ կադրային ստորաբաժանման տրամադրության տակ թողնելուն նախորդող երկու ամիսների ընթացքում պայմանագրային զինծառայողի ցանկությամբ (զեկուցագրի հիման վրա) նրան տրվում է հերթական արձակուրդ՝ տվյալ զորամասի հրամանատարի (զինվորական կառավարման մարմնի պետի) հրամանով, իսկ կադրային ստորաբաժանման տրամադրության տակ թողնված պայմանագրային զինծառայողին արձակուրդը տրվում է զինծառայողի զեկուցագրի հիման վրա (մինչև կադրերի տրամադրության տակ թողնելու ժամկետի ավարտը)՝ կադրային ստորաբաժանման տրամադրության տակ թողած իրավասու համապատասխան պաշտոնատար անձի հրամանով:

43. Հերթական արձակուրդում գտնվելու ընթացքում կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ հաստիքների կրճատման պատճառով զինծառայողն անձնակազմի անվանացուցակներից հանվում է արձակուրդն ավարտվելուց հետո, զորամաս ներկայանալու օրը, եթե առկա չեն պաշտոնի ընդունման-հանձնման գործընթացի իրականացմանն առնչվող հարցեր: Պաշտոնի ընդունման-հանձնման գործընթացի առկայության դեպքում զինծառայողը անձնակազմի անվանացուցակներից հանվում է պաշտոնի հանձնման-ընդունման ակտը հաստատվելուն հաջորդող օրը:

44. Հերթական արձակուրդում գտնվելու ընթացքում զորամասի լուծարման դեպքում զինծառայողը հետ է կանչվում սույն Կարգի 47-րդ կետի համաձայն:

45. Պայմանագրով ծառայություն անցնող զինծառայողներին ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու դեպքում արձակվում է իրավասու հրամանատարի (պետի) գրավոր հրաման: Նշված ժամանակը (բացառությամբ՝ մարտական հերթապահության (մարտական ծառայության), զորավարժությունների, մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերման) շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու անհնարինության դեպքում այն գումարվում և զինծառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հերթական արձակուրդին:

46. Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց տրվում է փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության

սահմանած կարգով և չափով: Այս դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված 2-րդ մասի համաձայն զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

47. Հերթական արձակուրդից պայմանագրային զինծառայողին հետ կանչել թույլատրվում է միայն ծառայողական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ արձակուրդ տրամադրած հրամանատարի (պետի) գրավոր հրամանով, որում նշվում են պատճառը, հետկանչի օրը, ամիսը և չօգտագործված արձակուրդի օրերի թիվը: Նշված դեպքում չօգտագործած արձակուրդի մասը տրամադրվում է նույն տարում, եթե կազմում է 15 օրացուցային օր և ավելի:

48. Սույն կարգի 47-րդ կետում նշված դեպքում արձակուրդից զինծառայողի հետկանչն իրականացվում է կապի հասանելի բոլոր միջոցներով, իսկ անհնարինության դեպքում՝ արձակուրդի անցկացման վայրի զորակոչային, զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման միջոցով:

49. Չօգտագործված արձակուրդի օրերը պայմանագրային զինծառայողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ (զեկուցագրի հիման վրա) միացվում են հաջորդ տարվա ամենամյա հերթական արձակուրդի օրերին՝ զեկուցագրին կցելով ամենամյա արձակուրդից հետ կանչելու մասին հրամանի պատճենը:

50. Պայմանագրային զինծառայողների զինվորական ծառայության ընդունվելու և զինվորական ծառայությունից արձակվելու տարում հերթական արձակուրդը հաշվարկվում է դրա ընդհանուր տևողությունը 12-ի բաժանելու և ստացված օրերը լրիվ ծառայած ամիսների թվով բազմապատկելու միջոցով: Ընդ որում, ոչ լրիվ ամիսներն ու օրերը կլորացվում են՝ ավելացման եղանակով:

51. Պայմանագրային զինծառայողներին օրացուցային տարվա ընթացքում լրացուցիչ արձակուրդ տրվում է՝

1) զինվորական ծառայության առանձնահատուկ կամ վնասակար պայմաններում ծառայության դեպքում՝ 10 օրացուցային օր՝ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N1698-Ն և 2014 թվականի հուլիսի 3-ի N712-Ն որոշումներով հաստատված պայմանների առկայության դեպքում: Նշված լրացուցիչ արձակուրդը պայմանագրային զինծա-

ռայողին տրվում է հերթական արձակուրդից օգտված լինելու դեպքում, ներկայացված զեկուցագրի հիման վրա,

2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ իր և ընտանիքի անդամի ամուսնության, ընտանիքի անդամի և կնոջ (ամուսնու) մերձավոր հարազատների (հայր, մայր, քույր, եղբայր, պապ, տատ) երկարատև հիվանդության, մահվան դեպքերում, այլ հարգելի պատճառներով: Սույն ենթակետով նախատեսված լրացուցիչ արձակուրդը տրվում է հիմքերը ծագելու օրվանից, զինծառայողի զեկուցագրի հիման վրա՝ նշելով համապատասխան փաստարկներ կամ կցելով անհրաժեշտ հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, այլ հարգելի պատճառների դեպքում արձակուրդը տրամադրվում է զորամասի հրամանատարի (զինվորական կառավարման մարմնի պետի) որոշմամբ:

52. Զինծառայողի ցանկությամբ, զեկուցագրի հիման վրա, սույն Կարգի 51-րդ կետով նախատեսված լրացուցիչ արձակուրդը կարող է միացվել հերթականին:

53. Պայմանագրային զինծառայողի հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով օրացուցային տարվա ընթացքում հերթական կամ սույն Կարգի 51-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված լրացուցիչ արձակուրդից չօգտվելու դեպքում դրանք տրվում են հաջորդ օրացուցային տարվա առաջին կիսամյակի ընթացքում: Ընդ որում, չօգտագործված հերթական արձակուրդը ներառվում է հաջորդ տարվա արձակուրդների տրման ժամանակացույցում՝ ոչ պակաս, քան 3 ամիս տարբերությամբ, նախորդելով տվյալ տարվա համար նախատեսված զինծառայողի հերթական արձակուրդին:

54. Ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնող պայմանագրային զինծառայողին ուսման ընդմիջումների ընթացքում ռազմաուսումնական հաստատության պետի հրամանով տրվում է՝

1) ձմեռային արձակուրդ՝ 15 օրացուցային օր.

2) ամառային արձակուրդ՝ 30 օրացուցային օր:

55. Ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառությունն ավարտելուց հետո պայմանագրային զինծառայողին (բացառությամբ մինչև 6 ամիս ժամկետով վերապատրաստման դասընթացներում ընդգրկվածների) տրվում է հետուսումնական արձակուրդ՝ 30 օրացուցային օր ժամկետով:

56. Միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող զինծառայողներին ուսումնական հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ.

1) ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր քննությանը՝ 3 աշխատանքային օր,

2) ստուգարքներին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգարքի դեպքում՝ 2 աշխատանքային օր,

3) լաբորատոր աշխատանքների կատարման համար՝ ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով,

4) դիպլոմային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար՝ 30 աշխատանքային օր,

5) պետական (ավարտական) յուրաքանչյուր քննությանը նախապատրաստվելու և հանձնելու համար՝ 6 աշխատանքային օր:

57. Հերթական արձակուրդը զինծառայողի ցանկությամբ կարող է տրամադրվել քննությունների, ստուգարքների, դիպլոմային աշխատանքների նախապատրաստման, լաբորատոր աշխատանքների կատարման ժամկետներին համապատասխան:

58. Ուսումնական արձակուրդ տրամադրելու համար զինծառայողը զեկուցագիրը, համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հետ միասին, ներակայացնում է իրավասու հրամանատարին (պետին):

59. Ուսումնական արձակուրդ տրամադրելու վերաբերյալ արձակվում է հրաման:

60. Կին զինծառայողին հղիության և ծննդաբերության համար տրվում է նպատակային արձակուրդ՝ բուժհաստատության համապատասխան տեղեկանքի հիման վրա.

1) 140 օրացուցային օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության համար),

2) 155 օրացուցային օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության համար)՝ բարդ ծննդաբերության դեպքում,

3) 180 օրացուցային օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության համար)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Նշված արձակուրդը հաշվարկվում է միասին և տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

61. Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված զինծառայողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական (երկու և ավելի նորածին որդեգրելու կամ երկու և ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական) դառնալը:

62. Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած կին զինծառայողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական (երկու և ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական) դառնալը:

63. Հղիության և ծննդաբերության տարում կին զինծառայողին հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա համար նախատեսված արձակուրդի տևողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համամասնաբար մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկու և կես օր հաշվարկով:

64. Պայմանագրային զինծառայողին զեկուցագրի հիման վրա տրվում է երեխայի խնամքի համար արձակուրդ՝ մինչև երեխայի երեք տարին լրանալը, որը նա կարող է օգտագործել լրիվ կամ մաս-մաս: Նման իրավունք ունեցող զինծառայողն այն կարող է ստանալ արտահերթ: Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում զինծառայողի պաշտոնը պահպանվում է:

65. Սույն Կարգի 64-րդ կետում նախատեսված արձակուրդը կարող է տրվել նաև արական սեռի զինծառայողին, եթե՝

1) նրա կինը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել մահացած կամ անհայտ բացակայող,

2) զինծառայողն ամուսնալուծվել և դատարանի կողմից երեխայի խնամքը հանձնվել է հորը կամ դատարանի կողմից մյուս ամուսինը ճանաչվել է անգործունակ կամ զրկվել է ծնողական իրավունքներից,

3) նրա կինը հանդիսանում է գրանցված աշխատող և համապատասխան գործատուին չի դիմել երեխայի խնամքի համար արձակուրդ տրամադրել և շարունակում է իր աշխատանքային պարտականությունների կատարումը, ինչը հավաստելու համար արական սեռի զինծառայողը կնոջ աշխատավայրից ներկայացնում է գործատուի կողմից տրված համապատասխան տեղեկանք: Այս պարագայում զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարը (պետը) գրություն է ուղարկում համապատասխան գործատուին՝ առաջարկելով երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ժամանակահատվածում զինծառայողի կնոջ կողմից երեխայի խնամքի համար արձակուրդ տրամադրելու դիմում ներկայացնելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնել ամուսնու զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին):

Երեխայի խնամքի համար արական սեռի զինծառայողին տրված արձակուրդի ընթացքում նշված հիմքերից որևէ մեկի վերանալու դեպքում զինծառայողն այդ մասին սույն Կարգի 67-րդ կետով սահմանված կարգով տեղեկացնում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին) ու անցնում ծառայողական պարտականությունների կատարմանը:

66. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է զինծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելիս, հերթական զինվորական կոչում շնորհելիս (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածի), զինվորական ծառայությունից արձակվելիս դրամական օգնության չափը և զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս:

67. Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում արձակուրդը վաղաժամկետ դադարեցնելու կամ արձակուրդի ավարտից հետո ծառայողական պարտականությունների կատարմանն անցնելու մտադրություն ունենալու դեպքում զինծառայողն այդ մասին առնվազն 10 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնում (զեկուցագիր է ներկայացնում) զորամասի հրամանատարին: Զինծառայողի կողմից սույն կետով սահմանված ժամկետը չպահպանելու (զեկուցագիրն ուշ ներկայացնելու) դեպքում զինծառայողի ծառայողական պարտականությունների կատարմանն անցնելու վերաբերյալ իրավասու հրամա-

նատարի (պետի) հրամանի տրման ժամկետը երկարացվում է համապատասխան օրերի քանակով:

68. Զինծառայող ամուսնու հերթական արձակուրդն իր ցանկությամբ (զեկուցագրի հիման վրա) կարող է տրամադրվել կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում՝ հիմք ընդունելով համապատասխան բուժհաստատության տրված տեղեկանքը:

69. Զինծառայողին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան 30 օրացուցային օր:

70. Զինծառայողին չվճարվող արձակուրդ տրամադրվում է համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում.

1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ զինծառայող ամուսնուն՝ տարվա ընթացքում 10 օրացուցային օր,

2) հաշմանդամ կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող զինծառայողին՝ բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան տարվա ընթացքում 10 օրացուցային օր:

4. ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ (ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ) ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

71. Զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից սույն Կարգի 79-րդ կետով սահմանված բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության կամ ռազմաբժշկական հանձնաժողովի գրության հիման վրա, որում նշվում են զինծառայողի հիվանդությունը, վերականգնողական արձակուրդի ժամկետը, օրերը, անցկացման վայրը և արձակուրդի ավարտից հետո ռազմաբժշկական հաստատություն ներկայանալու պարտականությունը:

72. Գրությունը ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում ռազմաբժշկական հաստատության կողմից ուղարկվում է զինծառայողի հրամանատարին (պետին), իսկ զինծառայողի՝ կադրերի տրամադրության տակ գտնվելու դեպքում՝ կադրային ստորաբաժանման

ղեկավարին, ում հրամանով էլ կադրերի տրամադրության տակ գտնվող զինծառայողին տրամադրվում է վերականգնողական արձակուրդ:

73. Սույն Կարգի 72-րդ կետով նախատեսված գրությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում իրավասու հրամանատարի (պետի) հրամանով զինծառայողին տրվում է հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ՝ գրությունում նշված ժամկետով և հրամանի քաղվածքը 1 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում տվյալ ռազմաբժշկական հաստատություն:

74. Ստացված հրամանի քաղվածքի հիման վրա ռազմաբժշկական հաստատության պետը զինծառայողին 1-օրյա ժամկետում տրամադրում է արձակուրդային թերթիկ՝ նշելով արձակուրդից վերադառնալու օրը և ժամը:

75. Հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդի ժամկետն ավարտվելուց հետո զինծառայողը պարտավոր է ներկայանալ տվյալ ռազմաբժշկական հաստատություն, ինչի վերաբերյալ նույն օրը ռազմաբժշկական հաստատության կողմից համապատասխան տեղեկատվություն է ուղարկվում իրավասու հրամանատարին (պետին):

76. Արձակուրդից վերադառնալու և ռազմաբժշկական հաստատություն զինծառայողի ընդունվելու մասին ռազմաբժշկական հաստատության կողմից տեղեկատվությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում իրավասու հրամանատարը (պետը) արձակում է զինծառայողի բուժման մեջ գտնվելու մասին հրաման:

77. Զինծառայողին առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով զինվորական ծառայությունից արձակելու ժամանակ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության պետի կողմից կարող է տրվել մինչև 30 օրացուցային օր տևողությամբ արձակուրդ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, ինչի մասին գրավոր տեղեկացվում է զորամասի հրամանատարին (զինվորական կառավարման մարմնի պետին):

78. Պայմանագրային զինծառայողի առողջարանային բուժումը կազմակերպվում է հերթական արձակուրդի ընթացքում:

79. Պայմանագրային զինծառայողների բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել անընդմեջ 90 օրացուցային օրը: Բուժման ավարտից հետո պայմանագրային զինծառայողները կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության, որի արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը մինչև 30 օրացուցային օր կարող է երկարաձգել բուժման մեջ գտնվելու ժամկետը կամ սահմանել վերականգնողական ժամկետ՝ մինչև 30 օրացուցային օր: Երկարաձգված բուժման կամ վերականգնողական ժամկետի ավարտից հետո պայմանագրային զինծառայողները կրկին ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության:

5. ԱՅԼ ԵՐԿՐՈՒՄ ԱՐՁԱԿՈՒՐԴՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

80. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս (բացառությամբ՝ Արցախի Հանրապետության) արձակուրդն անցկացնելու ցանկություն հայտնած զինծառայողն ւսրձակուրդի տրամադրման ժամանակացույցով հաստատված ժամկետից առնվազն 2 ամիս առաջ զեկուցագիր է ներկայացնում անմիջական պետին՝ նշելով մեկնելու ժամկետն ու երկիրը: Զեկուցագիրն ըստ վերադասության ներկայացվում է թույլտվություն տվող իրավասու պաշտոնատար անձին:

Սույն կետում նշված ժամկետը, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, թույլտվություն տվող իրավասու պաշտոնատար անձի համաձայնությամբ կարող է փոխվել:

81. ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողներին Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս այլ երկրում (բացառությամբ՝ Արցախի Հանրապետության) արձակուրդն անցկացնելու թույլտվություն տալիս են՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, պաշտպանության նախարարի օգնականներին, խորհրդականներին, ռեֆերենտին, ռազմաուսումնական հաստատությունների պետերին և ռազմաուսումնական հաստատությունն ավարտած զինծառայողներին, ՊՆ ենթակայությամբ գործող պետական հիմնարկների ղեկավարներին,

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ գլխավոր շտաբի պետի տեղակալներին, գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և զինծառայողներին, զորամիավորումների, միավորումների,

զորամասերի հրամանատարներին, ինչպես նաև մուտքի արտոնագրով երկրներում՝ նաև զորամիավորումների, միավորումների, զորամասերի զինծառայողներին,

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության պետը՝ պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ռազմաուսումնական հաստատությունների զինծառայողներին,

4) զորամիավորումների հրամանատարները՝ առանց մուտքի արտոնագրի երկրներում անմիջական ենթակայության և կառուցվածքային ստորաբաժանումների զինծառայողներին:

82. ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության (ՊՆ կառուցվածքային ստորաբաժանումների զինծառայողների վերաբերյալ) կամ գլխավոր շտաբի վարչակազմակերպչական վարչության պետերի (ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների և զինված ուժերի զինծառայողների վերաբերյալ) կողմից համապատասխանաբար՝ արձակուրդն այլ երկրում անցկացնելու ցանկություն հայտնած զինծառայողների տվյալներն ուղարկվում են ԱԱԾ ՌՀՀ դեպարտամենտ, որտեղից բացասական պատասխան ստանալու դեպքում նշված վարչությունների պետերը զեկուցագրեր (գրություններ) են ներկայացնում (ուղարկում) 81-րդ կետում նշված պաշտոնատար անձանց՝ վերջնական որոշում ընդունելու համար:

83. Արձակուրդն այլ երկրում անցկացնելու վերաբերյալ իրավասու պաշտոնատար անձի կայացրած որոշման վերաբերյալ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարը (պետը) սահմանված կարգով գրավոր տեղեկացվում է:

84. Զինծառայողի արձակուրդը մուտքի արտոնագրով երկրում անցկացնելու վերաբերյալ իրավասու հրամանատարի (պետի) ստորագրած հրամանի հիման վրա պաշտպանական քաղաքականության վարչությունում կազմվում է տեղեկանք, որն առձեռն հանձնվում է տվյալ զինծառայողին՝ համապատասխան դեսպանություն ներկայացնելու համար:

Հավելված 2
ՀՀ պաշտպանության նախարարի
2020թ. 05 «05»-ի
N 460-Ձ հրամանի

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ ՏԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ (ՊԵՏԵՐԻ)

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդ տալու իրավունք ունեն՝

1) ՀՀ պաշտպանության նախարարը՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, պաշտպանության նախարարի օգնականներին, խորհրդականներին, ռեֆերենտին, ռազմաուսումնական հաստատությունների պետերին և ռազմաուսումնական հաստատությունն ավարտած զինծառայողներին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող պետական հիմնարկների ղեկավարներին, իսկ խրախուսման կարգով տրվող լրացուցիչ արձակուրդը՝ ՀՀ պաշտպանության նախարարության ամբողջ համակարգում,

2) ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ գլխավոր շտաբի պետի տեղակալներին, գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, զինված ուժերի գլխավոր շտաբի պետի օգնականին, զորամիավորումների հրամանատարներին, իսկ խրախուսման կարգով տրվող լրացուցիչ արձակուրդը՝ զինված ուժերի ամբողջ համակարգում:

Զորամիավորումների հրամանատարներին տրվող արձակուրդները նախապես համաձայնեցվում են ՀՀ պաշտպանության նախարարի հետ, իսկ զինված ուժերի գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին տրվող արձակուրդների վերաբերյալ սահմանված կարգով զեկուցվում են:

3) ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության պետը՝ պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների զինծառայողներին,

4) ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, զորամիավորումների հրամանատարները՝ անմիջական ենթակայության զինծառայողներին, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների հրամանատարներին, իսկ խրախուսման կարգով տրվող լրացուցիչ արձակուրդը՝ ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմին:

Միավորումների, զորամասերի հրամանատարներին տրվող արձակուրդները նախապես համաձայնեցվում են ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հետ,

5) ռազմական ոստիկանության պետը՝ անմիջական ենթակայության և կառուցվածքային ստորաբաժանումների զինծառայողներին, ինչպես նաև կայազորների բաժինների (բաժանմունքների) պետերին,

6) ռազմաուսումնական հաստատությունների, պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային ընկերությունների պետերը՝ անմիջական ենթակայության անձնակազմին,

7) զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետը՝ անմիջական ենթակայության անձնակազմին և տարածքային ստորաբաժանումների զինծառայող ղեկավարներին,

8) զորամասի հրամանատարը, զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման ղեկավարը՝ անմիջական ենթակայության անձնակազմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀՐԱՄԱՆ

N_____ -Ա

«_____ » ___________20 թ. ք.Երևան

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 7-րդ մասը, ինչպես նաև հիմք ընդունելով փոխգնդապետ Ա. Ավագյանի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. N գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Արսեն Արամայիսի Ավագյանին հատկացնել 2019թ. հերթական արձակուրդի չօգտագործված 10 օրը՝ ս.թ. հոկտեմբերի 1-ից մինչև 10-ը ներառյալ:

2. N գումարտակի հրամանատարի պարտականությունների կատարումը հանձնարարել նույն գումարտակի հրամանատարի տեղակալ, մայոր Արթուր Արմանի Արսենյանին:

3. Հրամանը հասցնել անձնակազմին՝ վերաբերող մասով:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Պ. ՊՈՂՈՍՅԱՆ

(Տարբերակ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀՐԱՄԱՆ

N______ -Ա

«______ » ____________20 թ. ք.Երևան

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 48-րդ հոդվածի 3-րդ մասի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև հիմք ընդունելով մայոր Ս. Ավագյանի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. N գումարտակի հրամանատար, մայոր Սուրեն Արամի Ավագյանին հատկացնել 2020թ. հերթական արձակուրդից 20 օր՝ ս.թ. ապրիլի 13-ից մինչև մայիսի 4-ը ներառյալ ու արձակուրդի անցկացման վայր մեկնելու (ք.Մեղրի) և այնտեղից վերադառնալու համար՝ 2 օր:

2. N գումարտակի հրամանատարի պարտականությունների կատարումը հանձնարարել նույն գումարտակի հրամանատարի տեղակալ, մայոր Արտակ Արմանի Հարթենյանին:

3. Հրամանը հասցնել անձնակազմին՝ վերաբերող մասով:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Պ. ՊՈՂՈՍՅԱՆ

(Տարբերակ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀՐԱՄԱՆ

N_____ -Ա

«_____ » ___________20 թ. ք.Երևան

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև հիմք ընդունելով մայոր Ս. Ավագյանի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. N գումարտակի հրամանատար, մայոր Սուրեն Արամի Ավագյանին հատկացնել 2020թ. հերթական արձակուրդի մնացած 15 օրը՝ ս.թ. հոկտեմբերի 10-ից մինչև 24-ը ներառյալ:

2. N գումարտակի հրամանատարի պարտականությունների կատարումը հանձնարարել նույն գումարտակի հրամանատարի տեղակալ, մայոր Արտակ Արմանի Հարթենյանին:

3. Հրամանը հասցնել անձնակազմին՝ վերաբերող մասով:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Պ. ՊՈՂՈՍՅԱՆ

(Տարբերակ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀՐԱՄԱՆ

N______ -Ա

«______ » ____________20 թ. ք.Երևան

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 50-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև հիմք ընդունելով փոխգնդապետ Ս. Սահակյանի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. զորամասի հրամանատարի տեղակալ - շտաբի պետ, փոխգնդապետ Սահակ Սահակի Սահակյանին հատկացնել 2020թ. հերթական արձակուրդից 20 օր և լրացուցիչ արձակուրդի 10 օր՝ ս.թ. ապրիլի 13-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ:

2. Զորամասի հրամանատարի տեղակալ - շտաբի պետի պարտականությունների կատարումը հանձնարարել նույն զորամասի հրամանատարի մարտական պատրաստության գծով տեղակալ, փոխգնդապետ Պողոս Պողոսի Պողոսյանին:

3. Հրամանը հասցնել անձնակազմին՝ վերաբերող մասով:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Տարբերակ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀՐԱՄԱՆ

N_____ -Ա

«_____ » ___________20 թ. ք.Երևան

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ՊՆ 14203 զորամասի 20.02.2020թ. Է/փ ելք 111 գրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

N գումարտակի N վաշտի N դասակի N ջոկի հրաձիգ, շարքային Սիրակ Սահակի Սահակյանին (ծնված 2000թ., 2020թ. 1-ին զորակոչ, Շիրակի ՄԶԿ) համարել բուժման մեջ 2020թ. փետրվարի 21-ից:

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Տարբերակ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀՐԱՄԱՆ

N______ -Ա

«______ » ____________20 թ. ք.Երևան

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՊՆ 14203 զորամասի 10.03.2020թ. է/փ ելք 222 գրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Համարել ծառայության մեջ 2020թ. մարտի 10-ից՝ N գումարտակի N վաշտի N դասակի N ջոկի հրաձիգ, շարքային Սիրակ Սահակի Սահակյանին (ծնված 2000թ., 2020թ. 1-ին զորակոչ, Շիրակի ՄԶԿ):

ՀՀ ՊՆ 00000 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ձև 2

«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ ԵՄ»
ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

____

«______»________________20_______թ.

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ու Յ Ց

ՀՀ ՊՆ ___________ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) ժամկետային պարտադիր զինծառայողների
20_______թ. ընթացքում հիմնական (ամսական) արձակուրդների տրման

Ստորաբաժանումը______________________________

Հ/հ	Պաշտոնը	Զինծառայողի կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Այլ նշումներ

ԶՈՐԱՄԱՍԻ ՇՏԱԲԻ ՊԵՏ (ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ)

____

Ձև 3

«Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ   ԵՄ»
ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

____

«_______»__________________20_______թ.

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀՀ ՊՆ ___________ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) պայմանագրային զինծառայողների 20_______թ. ընթացքում հերթական արձակուրդների տրման

Հ/հ	Պաշտոնը	Զինծառայողի կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը	Հասանելիք հերթական արձակուրդի օրերը	Չօգտագործված արձակուրդի օրերը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ծանոթություն

ԶՈՐԱՄԱՍԻ ՇՏԱԲԻ ՊԵՏ (ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ)

____

ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԹԵՐԹԻԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ
ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

____
(զորամասը)

Կտրոն N________

____
(պաշտոնը, զինկոչումը)

____
(անունը, հայրանունը, ազգանունը)

տրվել է 20 թ. հիմնական (լրացուցիչ) արձակուրդ

____
(ընդգծել)

20 թ.________________ «__________»-ից մինչև

20 թ.________________ «__________»-ը, այդ թվում՝ արձակուրդի

անցկացման վայր մեկնելու և վերադառնալու համար__________օր:

Արձակուրդի վայրը

____
(պետությունը, մարզը, համայնքը)

Զինծառայողի հետ մեկնող ընտանիքի անդամները

____

____

____

Արձակուրդ տվող հրամանատարի (պետի)____________________
(պաշտոնը)

____
(զինկոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.տ.

«__________» ________________ 20 թ.

ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ
ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

____
(զորամասը)

Կտրոն N________

____
(պաշտոնը, զինկոչումը)

____
(անունը, հայրանունը, ազգանունը)

տրվել է 20 թ. հիմնական (լրացուցիչ) արձակուրդ

____
(ընդգծել)

20 թ.________________ «__________»-ից մինչև

20 թ.________________ «__________»-ը այդ թվում՝ արձակուրդի

անցկացման վայր մեկնելու և վերադառնալու համար__________օր:

Արձակուրդի վայրը

____
(պետությունը, մարզը, համայնքը)

Զինծառայողի հետ մեկնող ընտանիքի անդամները

____

____

____

Արձակուրդ տվող հրամանատարի (պետի)____________________
(պաշտոնը)

____
(զինկոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.տ.

«__________ ________________ 20 թ.

Ձև 5

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԹԵՐԹԻԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

____
(զորամասը)

Կտրոն N________

____
(պաշտոնը, զինկոչումը)

____
(անունը, հայրանունը, ազգանունը)

տրվել է 20 թ. հերթական (լրացուցիչ) արձակուրդ

____
(ընդգծել)

20 թ.____________________ «__________»-ից մինչև

20 թ.____________________ «__________»-ը, այդ թվում՝ արձակուրդի

անցկացման վայր մեկնելու և վերադառնալու համար___________օր:

Արձակուրդի վայրը

____
(պետությունը, մարզը, համայնքը)

Զինծառայողի հետ մեկնող ընտանիքի անդամները

____

____

____

Արձակուրդ տվող հրամանատարը (պետը)____________________
(պաշտոնը)

____
(զինկոչումը, ստորագրությունը, անունը,ազգանունը)

Կ.տ.

«__________» ____________________ 20 թ.

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

____
(զորամասը)

Կտրոն N________

____
(պաշտոնը, զինկոչումը)

____
(անունը, հայրանունը, ազգանունը)

տրվել է 20 թ. հերթական (լրացուցիչ) արձակուրդ

____
(ընդգծել)

20 թ.____________________ «__________»-ից մինչև

20 թ.____________________ «__________»-ը, այդ թվում՝ արձակուրդի

անցկացման վայր մեկնելու և վերադառնալու համար___________օր:

Արձակուրդի վայրը

____
(պետությունը, մարզը, համայնքը)

Զինծառայողի հետ մեկնող ընտանիքի անդամները

____

____

____

Արձակուրդ տվող հրամանատարը (պետը)____________________
(պաշտոնը)

____
(զինկոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.տ.

«__________» ____________________ 20 թ.

Ձև 6

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ ՊՆ __________ ԶՈՐԱՄԱՍԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Ստորաբաժանումը______________________

Հ/հ	Զինվորական կոչումը	Ազգանունը, անունը, հայրանունը	Զորակոչը	Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումը	Տրված կարգապահական տույժի տեսակը, օրը,	Արձակուրդի տրման ժամանակահատվածը				Այլ նշումներ
						հիմնական (ամսական)	Լրացուցիչ		հիվանդության պատճառով	
							որպես խրախուսում	ընտանեկան պայմաններից ելնելով		